ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2013 թվականի N 175-Ա

<<ՍՅՈՒՆԻՔ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին>> օրենքի՝ <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հաստատել <<Սյունիք >> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, կանոնադրությունը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն N 1 - N 5 հավելվածների:
2. Մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով 800.0 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. դեկտեմբերի 10
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 10-ի
N 175-Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման

1. Վ. Հակոբյան	ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ տեղակալ
3. Ն. Ավանիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Թ. Ղազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար
5. Ս. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Հայրապետյան	Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Ն. Ոսկանյան	Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Ա. Հովհաննիսյան	Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Մ. Զաքարյան	Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Վ. Գևորգյան	Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Ա. Հակոբջանյան	Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
12. Վ. Արզումանյան	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 10-ի
N 175- Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
<<Սյունիք >> մարզամշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է.

Նպաստել մարզի ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողների ու դպրոցականների շրջանում հայ արվեստի նկատմամբ սիրո դրսևորման, ազատ ժամանցի կազմակերպման, գեղագիտական դաստիարակության ձևավորմանը, շնորհալի և տաղանդաշատ երեխաների իհայտ բերմանը, հայրենիքի նկատմամբ սիրո, հավատարմության, հայրենասիրության գաղափարի սերմանմանը, միասնական հայրենիք կերտելու գաղափարի դրսևորմանը:

Միջոցառումները անց են կացվելու մարզի համայնքներում, ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում: Միջոցառման շրջանակներում կանցկացվեն բազմաբնույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, ավանդական, ազգային խաղեր:

Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, առողջության ամրապնդման, ակտիվ հանգստի կազմակերպման նպատակով մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների միջև կանցկացվեն վոլեյբոլի մրցույթներ:

Միջոցառման մասնակիցների կողմից կկատարվի հարգանքի տուրք և պսակադրություն Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:

Միջոցառման մասնակիցների այցելություն Կապանի պատմամշակութային հուշարձաններ, Կապանի երկրագիտական, քաղաքային և ժամանակակից արվեստի թանգարաններ:

Միջոցառման շրջանակներում կկազմակերպվեն մանկավարժական կոլեկտիվների այցելություններ մարզում տեղակայված N զորամասեր, զինծառայողների համար հանդիպում-համերգներ:

Միջոցառման ակտիվ մասնակիցները և սպորտային մրցումներում մրցանակային տեղեր գրաված թիմերը և մասնակիցները կպարգևատրվեն ՀՀ Սյունիքի մարզպետի պատվոգրերով ու հուշանվերներով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի10-ի
N 175- Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<<Սյունիք >> մարզամշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է.

Նպաստել մարզի ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողների ու դպրոցականների շրջանում հայ արվեստի նկատմամբ սիրո դրսևորման, ազատ ժամանցի կազմակերպման, գեղագիտական դաստիարակության ձևավորմանը, շնորհալի և տաղանդաշատ երեխաների իհայտ բերմանը, հայրենիքի նկատմամբ սիրո, հավատարմության, հայրենասիրության գաղափարի սերմանմանը, միասնական հայրենիք կերտելու գաղափարի դրսևորմանը: Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, առողջության ամրապնդման, ակտիվ հանգստի կազմակերպման, մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների սերտ համագործակցության ամրապնդումը:

Միջոցառման պատվիրատու և կատարողը

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառմանը մասնակցում են Սյունիքի մարզի շնորհալի երեխաներ, ստեղծագործողներ, ,երիտասարդներ,մարզի տարածաշրջաններից հրավիրված երաժշտական և պարային խմբեր, անհատ կատարողներ, դերասաններ, մակավարժական կոլեկտիվներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումները անց են կացվելու 2013թ. դեկտեմբեր ամսին մարզի հանրակրթական դպրոցներում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:
Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 10 -ի
N 175- Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման

Հ/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4240.00	300.0
2	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	30.0
3	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	50.0
4	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	150.0
5	Նվերներ	4237.12	210.0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում/	4239.11	40.0
7	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	4261.11	20.0
	Ընդամենը	-	800.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. դեկտեմբերի 10 -ի
N 175- Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույ Ց

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման

h/h	միջոցառման անվանումը	կատարման ժամկետը	կատարման վայրը
1	<<Սպորտը, որպես առողջ ապրելակերպի կարևորագույն խթանիչ >> խորագրով հանդիպում-քննարկում	դեկտեմբեր	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց
2	Հանդիպում- համերգային ելույթներ մարզում տեղակայված N զորամասերում և ուս. հաստատություններում	դեկտեմբեր	Մարզի տարածքում
3	Պսակադրություն Արցախյան պատերազմում զոհվածների շիրիմներին	դեկտեմբեր	Մարզի տարածաշրջաններում
4	Այցելություն Կապանի պատմամշակութային հուշարձաններ,թանգարաններ	դեկտեմբեր	Ք.Կապան
5	Մանկավարժական կոլեկտիվների վոլեյբոլի առաջնություն	դեկտեմբեր	Ք.Կապան Կապանի թիվ 7հ/դ Կապանի թիվ 7հ/դ
6	Հյուրասիրություն	դեկտեմբեր	Ք.Կապան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան